ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 5

Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 26 հոկտեմբերի 2017թ.

Սույն թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 10.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ն. Ա. Կուտուզյանը, Խ. Ժ Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց 1-ին, 3-րդ, 5-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Սմարթլայն» ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի և 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերի նախագծերի հաստատումն ու պայամանագրերի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրի նախագծի հաստատումը և պայամանագրի ապահովումը կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

1. 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել գրասենյակային կահույքի ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08(1)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 590.000 (հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:
2. 1-ին, 3-րդ, 5-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել գրասենյակային կահույքի ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08(2)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 147.000 (մեկ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ:

3. 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել գրասենյակային կահույքի ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/08(3)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 399.000 (երեք հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 5 և դեմ՝ 0:

հանձնաժողովի նախագահ՝	Ա. Հ. Ապրոյան
հանձնաժողովի անդամ՝	Ն. Ա. Կուտուզյան
հանձնաժողովի անդամ՝	Խ. Ժ. Սաֆարյան
հանձնաժողովի անդամ՝	Լ. Գ. Սիրունյան
հանձնաժողովի անդամ՝	Ս. Պ. Կարապետյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Բ. Ղարաբաղցյան